ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Օսմանյան Թուրքիայի կողմից 1915-1923 թվականներին իրականացված հույների եւ ասորիների ցեղասպանությունը դատապարտելու մասին»

1948 թ. ՄԱԿ-ը ընդունեց ՛՛Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին՛՛ կոնվենցիան, որում հստակ նշված են այն չափանիշները, որոնց համաձայն իրականացվող քաղաքականությունը որակավորվում է որպես ցեղասպանություն: Հիմնվելով այդ կոնվենցիայի վրա՝ Ցեղասպանագետների միջազգային ընկերակցությունը (International Association of Genocide Scholars) 2007թ. որոշում ընդունեց, որտեղ նշվում էր, որ «1914-1923թթ. Օսմանյան կայսրությունում քրիստոնյա փոքրամասնությունների՝ հայերի, ասորիների, Պոնտոսի և Փոքր Ասիայի հույների դեմ տարվող քաղաքականությունը հանդիսանում էր ցեղասպանություն»:

Հայերի, հույների և ասորիների ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչվել է Շվեդիայի խորհրդարանի կողմից 2010թ. մարտի 11-ի հատուկ բանաձևով: Հույների ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչել են Հունաստանը և Կիպրոսը, ընդ որում Հունաստանի խորհրդարանը 1994թ. ճանաչել էր Պոնտոսի հույների ցեղասպանությունը, իսկ 1998թ. Փոքր Ասիայի հույների ցեղասպանությունը:

Ցեղասպանագետները հայերի, հույների և ասորիների ոչնչացումը Օսմանյան Թուրքիայում դիտում են որպես մեկ քաղաքականության բաղկացուցիչ մասեր: Քաղաքականություն, որն ուղղված էր Փոքր Ասիան վերածելու միասնական մահմեդական, այնուհետև թուրքական տարածքի:

1909 թվականից երիտթուրքերն աստիճանաբար սկսում են որդեգրել և անցում կատարել ոչ մահմեդական ժողովուրդների բռնի ձուլման և տարհանման քաղաքականությանը, որի մեկնարկը դրվեց 1909թ. Ադանայում հայ բնակչության կոտորածով: Երիտթուրքերի ցեղասպան քաղաքականության որդեգրման տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունի 1911թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 9-ը Սալոնիկում տեղի ունեցած Իթթիհատ վե Թերաքքիի 4-րդ համագումարը, որտեղ քրիստոնյա ժողովուրդների բռնի ձուլման որոշում կայացվեց և նշվեցին այդ ծրագրի իրականացման հիմնական միջոցները[1]:

Օսմանյան կայսրության հունական բնակչությունը երիտթուրքական կառավարության ցեղասպան քաղաքականության թիրախ դարձավ 1913-1914թթ., երբ իրականացվեց Փոքր Ասիայի արևմտյան ափին բնակվող հունական բնակչության բռնագաղթը, որը կազմակերպվել էր Օսմանյան կառավարության կողմից և այն

[1] Տես՝ Арсен Авакян, Геноцид армян. Механизмы принятия и исполнения решений, Ереван 2013, с. 43-46.

վերահսկում էին ներքին գործերի նախարար Թալեաթը և Կենտրոնական կոմիտեի անդամ դոկտոր Նազրմը: Այսպես, 1914թ. մայիսի 14-ին ներքին գործերի նախարար Թալեաթի՝ Զմուռնիայի վալի Ռահմիին հղած հանձնարարականում ասված էր. «Քաղաքական պատճառներից ելնելով՝ անհետաձգելի է, որ Փոքր Ասիայի ափերին բնակվող հույները պետք է հարկադրվեն լքելու իրենց գյուղերը՝ Էրզրումի և Խալդիայի վիլայեթները տեղափոխվելու համար: Եթե հրաժարվեն նշված վայրերը տեղափոխվելուց, բանավոր հրահանգներ տվեք մեր մահմեդական եղբայրներին, որպեսզի բոլոր տեսակի դաժանություններով հարկադրեն հույներին լքելու բնակավայրերն իրենց համաձայնությամբ»[2]: Հույների տեղահանությունը ուղղորդվում էր սպանություններով և թալանով:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ 1914 թվականից սկվում է քրիստոնյա փոքրամասնությունների ոչնչացումն ու բռնագաղթեցումը: Ըստ Կ. Պոլսի Տիեզերական պատրիարքարանի տվյալների՝ 1913-1914թթ.՝ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, տեղահանված և կոտորված հույների թիվը կազմում է 284.172 մարդ (Թրակիա և Փոքր Ասիա՝ առանց Պոնտոսի), որից 153.890-ը՝ Փոքր Ասիայից, իսկ 130.282-ը՝ Թրակիայից[3]:

1915թ. Օսմանյան կայսրության հայ բնակչության ցեղասպանության հետ մեկտեղ սկսվեց ասորի բնակչության ոչնչացումը, չնայած որ Դիարբեքիրի շրջանում ասորիների առաջին կոտորածները տեղի էին ունեցել 1895-1896թթ., որոնք հայտնի են որպես «ասորիների համիդյան ջարդեր» 1894-1896թթ. հայկական կոտորածների հետ միաժամանակ[4]: Հետագայում թուրքական զորքերի Պարսկաստանի տարածք ներխուժելու ժամանակ նույնպես տեղի ունեցան ասորիների կոտորածներ, քանի որ ասորիները դիտվում էին որպես անվստահելի տարր, որը մոտ է հայերին և համագործակցում է ռուսների հետ: Պատահական չէ, որ 1915թ. Վանում ասորիների մասայական կոտորածների կազմակերպիչ Վանի կուսակալ Ջևդեթը 1915թ. փետրվարին իր հեռագրերից մեկում նշում էր. «Մենք մաքրեցինք հայերին և ասորիներին Ադրբեջանից և նույնը պետք է անենք Վանում»[5]:

1915թ. ասորիների մասայական կոտորածներ տեղի ունեցան Դիարբեքիրի և Վանի վիլայեթներում, ընդ որում հայկական բնակավայրերի մոտ գտնվող ասորական գյուղերի բնակիչները տեղահանվում և ոչնչացվում էին հայերի հետ միասին: Ըստ

---

[2] Տես՝ Գևորգ Վարդանյան, Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը (1914-1923թթ.), Երևան 2012, էջ 73.
[3] Նույն տեղում, էջ 84-85:
[4] Տես՝ David Gaunt, The Assyrian Genocide of 1915, **http://www.seyfocenter.com/index.php?sid=2&aID=36**

[5] Տես՝ Taner **Akçam,** . *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility*. New York: Metropolitan Books, 2006, p. 201

ասորական պատրիարքարանի տվյալների՝ ցեղասպանության զոհ է դարձել 250.000 – 300.000 ասորի[6]:

1915-1916թթ. ասորիների ցեղասպանության գործում առանձնահատուկ դերակատարություն ունեցավ «Միություն և առաջադիմություն» կուսակցության չորս հիմնադիրներից մեկը՝ Դիարբեքիրի վալի Մեհմեդ Ռեշիդը, որը միաժամանակ հանդիսանում էր մի շարք վիլայեթների Իթթիհատի պատասխանատու քարտուղարը: 1915թ. հուլիսի 12-ին նրան գրված իր հեռագրում Թալեաթը բառացիորեն ասում է. «Հայտնի է դարձել, որ վերջին ժամանակներս վիլայեթում ապրող հայերը և այլ քրիստոնյաներն առանց դավանանքի խտրականության սպանդի են ենթարկվում հիմնականում այն անձանց կողմից, որոնք իրականացնում են Դիարբեքիրից բնակչության տեղահանությունը: Նրանք, Մարդինից պատասխանատուների հետ միասին գիշերներով քաղաքի արվարձաններ տեղափոխելով հայերին և այլ քրիստոնյաներին, ոչխարների պես մորթել են 700 հոգի, իսկ մինչ այսօր մորթվածների թիվը կազմում է 2000 հոգի և եթե չկանխել դա ապա մյուս վիլայեթների մահմեդական բնակչությունը կսկսի քրիստոնյաների համատարած ոչնչացումը: Թույլ չի տրվում հայերի նկատմամբ կիրառվող միջոցները տարածել այլ քրիստոնյաների վրա, քանի որ դա բացասական կազդի հասարակական անվտանգության վրա»[7]: Այս հեռագրից երևում է, որ Թալեաթը ոչ թե անհանգստացած է քրիստոնյաների ոչնչացման կանխման հարցով, այլ, որ դա կատարվի համակարգված, կառավարությունից եկած հրահանգների համաձայն, այլ ոչ թե ինքնաբուխ: Ոչնչացման քաղաքականությունը որպես ցեղասպանություն որակելու համար անհրաժեշտ է պետական երկարատև քաղաքականություն, ինչը ասորիների պարագայում միանգամայն առկա է:

1917թ. Հունաստանը մասնակցեց Առաջին համաշխարհային պատերազմին որպես Անտանտի դաշնակից, ինչը հակահունական քաղաքականության ակտիվացման պատճառ հանդիսացավ: Հույները զորակոչվում էին Օսմանյան բանակ և ուղարկվում աշխատանքային գումարտակներ, որտեղ նրանց սպասում էր հայերի և ասորիների ճակատագիրը: Ըստ հունական տվյալների՝ 1914-1918թթ. աշխատանքային գումարտակներում հավաքված 18-45 տարեկան հույների թիվն անցնում էր 200.000-ը, որոնցից առնվազն 150.000 նահատակվել է[8]:

Սակայն Օսմանյան Թուրքիայում հունական բնակչության ոչնչացման հիմնական քաղաքականությունը տեղի ունեցավ 1919-1922թթ. հույն-թուրքական պատերազմի տարիներին և այդ իրադարձությունների վերաբերյալ հունական պատմագրությունը ցեղասպանության որակավորումն օգտագործելու հետ մեկտեղ

---

[6] Տես՝ David Gaunt, The Assyrian Genocide of 1915, **http://www.seyfocenter.com/index.php?sid=2&aID=36**

[7] Տես՝ Osmanlı Belgelerinde Ermeniler (1915-1920), Ankara, 1994, s. 68-69

[8] Տես՝ Գևորգ Վարդանյան, նշվ. աշխ., էջ 92

կիրառում է նաև «փոքրասիական աղետ» եզրույթը՝ նկատի ունենալով Պոնտոսի շրջանի և Փոքր Ասիայի վիլայեթներում հույների մասայական ոչնչացումը:

1919-1922թթ. Թուրքիայում ծավալված ազգայնական պայքարի հիմնական թիրախ հանդիսացան ոչ թե Անտանտի պետությունները, այլ ոչ մահմեդական ազգային փոքրամասնությունները: 1919-1922թթ. քեմալական կառավարությունը կազմակերպեց Պոնտոսի հույների մասայական կոտորածները: Պոնտոսի հույների ոչնչացման առանձնահատուկ դաժանությունը նկարագրվում է բոլոր ականատեսների կողմից: 1921թ. հուլիսին "The New York Times" թերթը գրում էր, որ «...700.000 հույներ են կոտորվել, արտաքսվել կամ մահացել սովից Թուրքիայի հետ պատերազմն սկսելուց ի վեր»[9]:

Փոքրասիական աղետի ողբերգական էջերից մեկը հանդիսանում է 1922թ. Զմուռնիայի աղետը: Զմուռնիայի աղետի ժամանակ առանձնահատուկ դաժանությամբ սպանվեց հույն միտրոպոլիտը, սրի քաշվեցին կանայք և երեխաներ, իսկ քաղաքի քրիստոնյա թաղամասերը, ուր բնակվում էին հույները և հայերն այրվեցին: Բացի բուն բնակչությունից քաղաքում կար 150.000 փախստական:

Ընդհանուր առմամբ Օսմանյան Թուրքիայում հույների ցեղասպանության զոհ դարձան 1.000.000 – 1.100.000 մարդ, որոնք կամ սպանվեցին կամ տեղահանվեցին և սա այն թվերն են, որ 1922թ. դեկտեմբերի 1-ին Լոզանի կոնֆերանսի սահմանային և ռազմական հարցերի հանձնաժողովում հնչեցրեց լորդ Քերզոնը[10]:

Ըստ ասորական պատրիարքարանի տվյալների՝ ոչնչացվել է շուրջ 250.000 – 300.000 ասորի:

---

[9] Նույն տեղում, էջ 124.

[10] Տես՝ Lausanne Conference on Near East Affairs 1922-1923. Records of Proceedings and Draft Terms of Peace, London, 1923, p. 121-122.